600.0259.07.09.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

7 սեպտեմբերի 2016 թվականի №259Ա
ք.Երևան

«ԱՏԼԱՍ-ԷՆԵՐԳՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԱՅԳԵՁՈՐ-2» ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ №0294 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2008 թվականի հուլիսի 30-ի №410Ա որոշմամբ «ԱՏԼԱՍ-ԷՆԵՐԳՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Այգեձոր-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0294 լիցենզիան (այսուհետ՝ №0294 լիցենզիա), սակայն Ընկերությունը մինչև 2016 թվականի հուլիսի 30-ը չի վճարել էլեկտրական էներգիայի արտադրության ժամանակահատվածի համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված տարեկան հերթական պետական տուրքի գումարը,

բ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2016 թվականի օգոստոսի 12-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Օրենքի 5-րդ հոդվածի, 19-րդ հոդվածի 7-րդ կետի 7.5.2.1 ենթակետի և 34-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի վճարման պարտավորության խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, և առաջարկել է Ընկերությանը յոթնօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել հարուցված վարույթի շրջանակում ուսումնասիրվող հարցի առնչությամբ իր փաստարկները և դրանք հիմնավորող փաստաթղթերը, սակայն Ընկերությունը որևէ փաստարկ կամ հիմնավորում չի ներկայացրել,

գ) համաձայն Օրենքի 5-րդ հոդվածի՝ պետական տուրք վճարողները պարտավոր են ժամանակին և լրիվ վճարել Օրենքով սահմանված պետական տուրքերը, պետական տուրքի վճարումով ծառայություններ կամ գործողություններ իրականացնող մարմիններ կամ պաշտոնատար անձանց ներկայացնել պետական տուրքի վճարումը հիմնավորող փաստաթղթերը,

դ) Օրենքի 6.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ֆիզիկական անձանց և կազմակերպությունների հերթական տարեկան պետական տուրքի վճարման պարտավորությունը դադարում է այդ պարտավորության կատարմամբ՝ Օրենքով սահմանված դրույքաչափերով ու ժամկետներում հերթական տարեկան պետական տուրքի գումարների (պետական տուրքի գումարը համարվում է վճարված Հայաստանի Հանրապետության բյուջեի համապատասխան հաշվին հաշվեգրվելու օրվանից), ինչպես նաև դրանց վճարումն ուշացնելու համար Օրենքով սահմանված տույժերի գումարների վճարմամբ,

ե) Օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ կետի 7.5.2.1 ենթակետի համաձայն՝ էլեկտրական էներգիայի արտադրության ժամանակահատվածի համար մինչև 6 ՄՎտ (ներառյալ) դրվածքային հզորության կայանների տարեկան պետական տուրքը գանձվում է բազային տուրքի 100-ապատիկի չափով,

զ) Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ Օրենքով սահմանված տարեկան հերթական պետական տուրքի վճարումը յուրաքանչյուր առաջիկա տարվա համար կատարվում է մինչև առաջիկա տարին սկսելը՝ լիազոր մարմնի կողմից տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների, որակավորման վկայականների) վրա նշված փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների, որակավորման վկայականների) տրման ամսաթվից ոչ ուշ,

է) Օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ Օրենքով սահմանված տարեկան պետական տուրքերի վճարման համար սահմանված ժամկետներում վճարումը չկատարելու դեպքում բյուջե չվճարված պետական տուրքի գումարները ենթակա են վճարողից բռնագանձման պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0.15 տոկոսի չափով՝ հաշվարկված տույժի հետ միասին,

ը) իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի, 19-րդ հոդվածի 7-րդ կետի 7.5.2.1 ենթակետի, 34-րդ և 35-րդ հոդվածների պահանջները՝ չի վճարել մինչև սույն թվականի հուլիսի 30-ը վճարման ենթակա հարյուր հազար դրամ

հերթական պետական տուրքի գումարը, ինչպես նաև այդ գումարի նկատմամբ հաշվարկվող տույժը,

թ) «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ տարեկան պետական տուրքի չվճարման հիմքով լիցենզիայի գործողությունը կասեցված է համարվում լիազոր մարմնի կողմից տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում տրված լիցենզիաների վրա նշված լիցենզիաների տրման ամսաթվից, և

հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասի երկրորդ պարբերությունը, 36-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, 2-րդ և 10-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի, 19-րդ հոդվածի 7-րդ կետի 7.5.2.1 ենթակետի, 34-րդ և 35-րդ հոդվածների խախտման հիմքով 2016 թվականի հուլիսի 30-ից կասեցված համարել №0294 լիցենզիայի գործողությունը՝ մինչև խախտման պատճառի վերացումը՝ այն է՝ Ընկերության կողմից №0294 լիցենզիայի՝ հարյուր հազար դրամ տարեկան հերթական պետական տուրքի գումարի և 2016 թվականի հուլիսի 30-ից մինչև պետական տուրքի փաստացի վճարման օրը Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն հաշվարկվող տույժի վճարումը:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
7 սեպտեմբերի 2016թ.
ժամը 16[00]